

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՆԱՄԿՆԵՐԻ ՖԱՈՒՆԱՆ, ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՆԱՆԹՐՈՊ ԱՌԱՆՁՆՅԱԿՆԵՐԸ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, Լևոն ՊԱՊՅԱՆ, Էդուարդ ՅԱՎՐՈՒՅԱՆ

Բանալի բառեր – քնամկներ, կաթնասուններ, ֆաունա, սինանտրոպիզմ, մեծ քնամուկ, անտառային քնամուկ, զիշատիչներ, հյուսիսային շրջաններ.

Ключевые слова – сони, млекопитающие, фауна, синантропизм, соя-полчок, лесная соя, хищники, северные районы.

Keywords – dormouse, mammals, fauna, synanthropism, edible dormouse, forest dormouse, predators, northern regions.

ՓԱՄՆԱ. ՐԱՏՔՐՈՍՏՐԱՆԵՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԻՆԱՆՏՐՈՊԻԶՄ ՏՈՆԻՆ Բ ԱՐՄԵՆԻԱԻ

А. Саргсян, Л. Папян, Э. Явруян

Работа посвящена исследованиям по синантропным млекопитающим Армении. В предыдущих работах мы подробно описали некоторых синантропных представителей северных, центральных и южных регионов Армении. Однако результаты наблюдений за соневыми впервые представлены в данной работе. Фауна этих зверьков недостаточно изучена, а синантропность среди них и вовсе новое явление.

FAUNA, PREVALENCE AND SINANTHROPISM OF DORMICE OF ARMENIA

H. Sargsyan, L. Papryan, E. Yavruyan

This is another message about our researches of the synanthropic mammals in Armenia. We described in detail some synanthropic mammals in the northern, central and southern regions of Armenia in previous papers. However, the results of dormice observations are presented in this article for the first time. The fauna of these animals is not studied enough and the synanthropism among them is a new phenomenon.

Այս աշխատանքը Հայաստանի սինանտրոպ կաթնասունների վերաբերյալ մեր հետազոտությունների շրջանակներում հերթական հոդվածն է: Նախորդ աշխատանքներում մանրամասն նկարագրվել են հանրապետության հյուսիսային, կենտրոնական եւ հարավային շրջանների կաթնասունների որոշ սինանտրոպ ներկայացուցիչներ: Այնուամենայնիվ, քնամկների ուսումնասիրությունների արդյունքները առաջին անգամ են ներկայացվում: Այս կենդանիների ֆաունան բավարար ուսումնասիրված չէ. իսկ սինանտրոպիզմի երևույթը դրանց մոտ ի հայտ է եկել ոչ վաղ անցյալում:

Հայաստանի հանրապետությունում սինանտրոպ կաթնասունների ֆաունան ուսումնասիրվում է նախորդ դարի 90-ական թվականներից [1]: Կատարվող հետազոտությունների բազմազանությունով, ինչպես նաև սեփական տներում և մարդկային այլ բնակավայրերում կատարվող աշխատանքների բարդությամբ պայմանավորված մեր ուսումնասիրությունները տարբեր բնակլիմայական պայմաններում, գոտիներում և լանդշաֆտներում անց են կացվում ոչ միաժամանակ: Առհասարակ, սինանտրոպներին ուսումնասիրելիս մենք առանձնացնում եք մարզերի առավել բնակեցված տեղանքները, սակայն քնամկների դեպքում, հաշվի առնելով այդ կենդանիների կենսակերպի առանձնահատկությունները, նախապատվությունը տվեցինք համեմատաբար փոքր քաղաքներին և գյուղերին:

Քնամկների կյանքի համար առավել բարենպաստ վայրերը, ինչպիսին, օրինակ, բարձրադիր շրջաններն են, օգտագործվում են մարդու կողմից որպես ընտանի կենդանիների արտավայրեր, նրանց ժամանակավոր կամ հիմնական կացարաններ: Բոլոր ողնաշարավորների, այդ թվում մեզ հետաքրքրող կրծողների տեսակների սինանտրոպ պոպուլյացիաների կազմավորումը, կախված է մի շարք գործոններից, որոնքն էլ իրենց ներթափանցող կապով են մարդու կառուցած տարատեսակ շինությունների և դրանց հարակից լանդշաֆտների դասավորվածությունից [2, 3]:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ որքան ավելի երիտասարդ ու փոքր է բնակավայրը, այդքան ավելի շատ են հանդիպում շրջակա միջավայրի ցենոզներին բնորոշ ողնաշարավոր կենդանիների տեսակները: Ուրբանիզացված բնակավայրերի հետագա զարգացումն ու ընդլայնումը նպաստում է այդ տեսակների քանակի կրճատմանը և տեսակային կազմի աղքատացմանը:

Քնամկները (Glis) սովորաբար բնակություն են հաստատում մինչև 2000 մ բարձրություններում, հիմնականում հանրապետության հյուսիսարևելյան, մասամբ՝ նաև Սյունիքի մարզի անտառներում: Մարմնի երկարությունը մինչև 185 մմ է, պոչինը՝ 160 մմ : Մորթին միազույն է, որոշ տեսակների մոտ

նախշերով՝ հիմնականում աչքերի շուրջ, մոխրագույն է, երբեմն՝ գորշ երանգով: Բնակվում են ծառերի փչակներում, արմատների տակ՝ ստորգետնյա բներում, երբեմն՝ անձավներում և ժայռածեղքերում: Սինանտրոպ առանձնյակները հայտնաբերվում են տների ձեղնահարկերում կամ նկուղներում: Մնվում են մրգերով, սերմերով, հատապտուղներով, տերևներով: Ակտիվ է օրվա մութ ժամերին: Ձմեռային քուն է մտնում սեպտեմբեր-հոկտեմբերից մինչև ապրիլ: Տարվա ընթացքում բազմանում է 1 անգամ, ունենում 3-8 ձագ [4]:

Ինչպես մեծ քնամկան, այնպես էլ քնամկների այլ տեսակների պարագայում, կախված քնապահպանական իրավիճակի վատթարացումից և, առաջին հերթին ծառահատումների հետևանքով, կենդանիների մոտ ի հայտ են եկել սինանտրոպության հատկանիշներ և, որպես հետևանք, երևույթներ, որոնք խախտում են քնական հավասարակշռությունը՝ մարդու կացարան բերելով էկոտ և էնդոպարազիտների նոր տեսակներ: Մարդու քնակավայրերում մեծ քնամկան հայտնվելու պես, այստեղ են գալիս նաև նրան հետևող մանր գիշատիչներ (աքիս, քարակգաքիս, հազվադեպ նաև խայտաքիս), որոնք մեծ քնամկանից բացի հետապնդում և ոչնչացնում են նաև տնային թռչունների, ճագարների, վնասում են ինչպես նաև պարենի պաշարները:

Հայաստանում նկարագրվել է հիմնականում երկու տեսակ՝ անտառային քնամուկը և մեծ քնամուկը: 3-րդ տեսակի՝ այգու քնամկան ներկայությունը դեռևս հստակ չէ և որոշակի կասկածներ է հարուցում, չնայած մեկ առանձնյակ Դիլիջանի շրջակայքում, այնուամենայնիվ, հաջողվել է որսալ:

Անտառային քնամուկ – այս կենդանիների մոտորոշ շրջաններում սինանտրոպության ի հայտ գալը ստիպել է ամենակեր, սակայն բուսականություն գերադասող անտառային քնամկանը սնվել այն ամենով, ինչը հնարավոր է գտնել մարդկային բնակավայրերում, սկսած գրքերից, մինչև անգամ մանր ընտանի կենդանիները:

Այգու քնամուկ – ի տարբերություն նախորդ երկու տեսակների, այս մեկը մեր ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել է ընդամենը մեկ անգամ՝ Դիլիջանի շրջանի Բլդանչայ գետի ափին գտնվող փայտե տնակի ձեղնահարկում:

Մեր հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ սինանտրոպ պոպուլյացիաների ի հայտ գալն, ամենայն հավանականությամբ, մարդու՝ բնության հանդեպ կործանարար վերաբերմունքի, այդ թվում անկանոն անտառահատումների, մասնավորապես խոշոր փչակավոր ծառերի վերացման, քնամկների բնակեցման համար աննպաստ պայմանային շենքի կառուցման հետևանքն է: Բացի այդ, պետք է նշել, որ մարդուն ուղեկցում են ընտանի կենդանիները, որոնք ևս չեն նպաստում, այլ հաճախ նաև խանգարում են քնամկների բազմացմանը: Հարկ է նշել նաև, որ մարդու գործունեությունը միջտուղեկվում է որոշակի աղմուկով, ինչը քնամկների համար հատկապես կործանարար է ձմռանը, երբ նրանք երկարատև հանգստի՝ ձմեռային քնի կարիք ունեն:

Իմի բերելով կատարված աշխատանքները, հանգում ենք այն եզրակացությանը, որ սինանտրոպիզմի երևույթը քնամկների մոտ գրանցվում է Հայաստանի գրեթե բոլոր հյուսիսային շրջաններում, առավել հաճախ մեծ քնամկան (*Glis glis*) և անտառային քնամկան (*Dryomys nitedula*) [4] մոտ: Սինանտրոպիզմի ձգտման պատճառը բացատրվում է մարդու գործունեությամբ, ինչն արտացոլվում է զանգվածային անտառահատումներով և քնամկների կենսական տարածքի յուրացմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Даль С.К. 1954. Животный мир Армянской ССР. Т. 1. Позвоночные животные. Ереван, Изд-во АН СССР, 414 с.
2. Попов Г.Ю. — Эколого-фаунистическое исследование и распространение некоторых мелких млекопитающих Армении. Ереван, 2003. Кандидатская диссертация
3. Явруян Э.Г., Попов Г.Ю., Арутюнян М.К., Казарян А.С., Авагян А.А. — Распространение насекомыхных, рукокрылых и грызунов по вертикальным поясам. Москва, 2006.
4. Павлинов И. Я. 2006. Систематика современных млекопитающих. 2-е изд. — М.: Изд-во Моск. ун-та, 297 с.
5. Папян Л.Г. - Формирование синантропизма в некоторых северных районах Армении на примере представителей отряда хищных млекопитающих. Вестник Российско-Армянского Университета, Серия: Физико-Математические и Естественные Науки, № 2. 2015. с. 91-94.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Վ. Տ. Հայրապետյանը: